

Հ. Մ. ԶՈՒՄՉԵՍՆԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ
ՇԱԲՈՀԻՒՍՈՒԹԵՍՆ ԶՈՐՊԱՅՄՈՒՆ ԳՈՐԾՈՒՄ

(Ծար. տե՛ս «Բազմավեպ», 1969, թ. 8-10, էջ 217)

Բառակապակցութիւնները կենդանի հասկացութիւններ Զամշեանի մօտ

Բառակապակցութիւնները կենդանի լեզուի մէջ շատ վաղուց են գոյութիւն ունեցել, սակայն հարցի տեսական կողմէին քերականները շատ ուշ են անդրադարձել: Վերջին մի քանի տասնամեակեներում է, որ լեզուարանական եւ քերականական աշխատութիւններում այս հարցը առաջ է քաշուել:

Բառակապակցութեան հասկացութիւնը միասնական ըմբռնում ու բացատրութիւն չունի արդի լեզուարանների եւ քերականների մօտ: Ոմանք բառակապակցութիւն են համարում երկու կամ աւելի բառերի միասին իրար հետ կապակցուած այնպիսի գործածութիւնը, որը շարահիւստիկան ըմբռնում էլ: Ոմանք ենթակայի ու ըստորոշեալի եւ նախագասութեան այլ երկու անդամների կապակցուած գործածութիւնը եւս բառակապակցութիւն են համարում եւ այլն:

Շարահիւսութիւնը արդի վիճակում ուսումնասիրում է նաեւ բառակապակցութիւնները: Ինչպէս բառերն են շարահիւսութեան նիւթը կազմում, գառնում են նախագասութեան անդամներ, այդպէս էլ բառակապակցութիւններն են շարահիւսութեան նիւթը գառնում: Տարբերութիւնն այն է, որ բառակապակցութիւններն արդին որոշ չափով փոփոխուած եւ կապակցուած են, ուստի եւ աւելի մօտ են շարահիւսական ըմբռնումներին, քան նախագասութեան տատագը կազմող առանձին բառերն առաջ կապակցուած են:

Ասկայն առանց ստորովման, նրանք իմաստ ունեն, որոշ հասկացութիւն են արտայայտում, բայց միտք չեն արտայայտում: Այս կապակցութիւնները նախազառաւթեան կառուցուածքի մէջ հանդէս են գալիս որպէս կիսով չափ պատրաստի նիւթ, իսկ կապակցութեան մէջ երբեմն հանդէս գալով նաեւ որպէս ամրողջական անդամներ:

Օրինակ՝ առաջին դաս ... գարնանային օր ... արեւ ու զարուն ... հետեւակ եւ ծիսառը զինուորներ: Այս բառակապակցութիւնների խօսքի մէջ կարող են հանդէս դալ նաեւ նախագասութեան դերով, նախագասութեան իմաստ ստանալ այլ նախագասութիւնների չնորհիւ, սակայն խօսքից դուրս գրանք քերականական այնպիսի կապակցութիւններ են, որոնք միանանական են, արտայայտում են առանձին հասկացութիւններ, բայց գեւ նախազաստիւններ չեն, որովհետեւ նրանցում բացակայում է ստորովման դադարքարը: Այսպէս, բառակապակցութիւնները նախագասութեան մէջ, միւս բառերի կապակցութեան տարբերութեամբ կտրող են զառնալ խօսքի հազարդակցման միջոց:

Բառակապակցութիւնները շարահիւսական գրական իրողութիւն են: Ս. Զուղացյեցուց, Կոստանդնուպոլսկեցուց և Պալտասար Դարբից յետոյ Զամշեանը չորրորդ քերականն է, որ գիտակցել է բառակապակցութիւնների շարահիւսական նման դերը եւ գրանք քննութեան է առել իր զասագքերում: Զամշեանը միանդամյան ճիշտ է նկատել, որ «նախագասութիւն» եւ «բառակապակցութիւն» հաս-

կացութիւններում կայ էսական տարրե-
րութիւն, այն է, որ բառակապակցու-
թիւնը ստորոգում չունի, մինչդեռ էկայ
եւ չի կարող զոյտթիւն ունենալ նախա-
գասութիւն՝ առանց ստորոգման, անկախ
նրանից՝ այդ ստորոգումը բակայ է, թէկ
զեղչուած : Բառակապակցութիւնները,
ինչպէս ասեցինք, որոշ հասկացութիւն են
արտայայտում եւ, ինչպէս բառերը,
դառնում են շարահիւսութեան շինանիւթ,
աստաղձ : Ըստ վերականի մտքի՝ պարզ
հայեցումը կամ ըմբռնումը գեռ նախա-
գասութիւն է, յարտրեօրիէն աւարտուն
միտք չի արտայայտում, որովհետեւ նր-
ման բառակապակցութիւններում բայ-
չեայ, չի ենթադրւում, եւ երբեք էլ հը-
նարաւոր չէ մտքով այն վերականգնել:
«Զի սոքա միայն զըմբռնումուն մտաց
բայունեալ բաւէտ շարայթեալ բառք ա-
պին - զրում է Զամշէհանը - բայ թէ բանի

տացւում է. «Ի քէն տուեալ լինին լահն-
ջանք, եւ ի մէնջ ընծային քեզ յանձնա-
ռութիւնք տանջանացգ. որպէս պատրաստ
է սուրբ քո, սոյնպէս եւ պատրաստ է պա-
րանց մէր» (1859 թ., Մոսկուա, էջ 89):

Այսպէս, Զամշեանի ելակէտը նախագասութեան և բառակապակցութեան տարրերակման հարցում ստորոգումն է, որպէս հասկացութեան ըմբռնումը նախագասութեան մէջ առկայ ձեւով կամ զօնութեամբ հասկանալով: Ենինով սրանից՝ Զամշեանը եղբակացնում է, որ բառակապակցութիւնները նախագասութիւններ լինել չեն կարող, քանի որ նրանցում այս չկայ, այսինքն՝ ստորոգում չի կատարուում: Այս մասին քերականը գրում է. «Ասացի զդատունն մտաց, զի եթէ իմայն զպարզ հայեցողութիւն կամ զըմունումն մտաց յայտնեսցէ, ոչ է բան ըստ երթողաց...»:

ԱՐՄԱՆԱՋԻՆՈՒԹԻՒՆ

«Յաղագս համաձայնութեան մասանց անի» դրտիքը արդի ըմբռութեամով շարա-
թւութիւնն է: Այս բաժնում քերականը
ուսում է խօսքի մասէրի համաձայնու-
թեան, խնդրապութեան և կապակցու-
թեան մասին: Յենուելով խօսքի ութ մա-
յրի սկզբունքին՝ Զամշէանը համաձայ-
նութեան ութ զէպք է ընդունում: «Արդ
ամաձայնութիւնք մասանց բանի են կա-
պցութիւնն նոցա ընդ միմեանս՝ առ ի
պմիւ բան, - գրում է նա: - Այս կա-
պցութիւնն ի լինին ութ եղանակաւ բառ
թից մասանց բանի»¹⁴:

Արդի քերականութիւններում կապակ-
տիւն ասելով հասկանում են համա-
յանութիւնը, չարազառութիւնը եւ խրն-
առութիւնը (կամ հորոգառութիւնը),
ոչ կերպ ասած՝ հնիթակայի եւ սուրո-
ւայի համաձայնութիւնն ու չարազա-
թիւնը, որոշչի և որոշեալի, յատկա-
ցչի և յատկացեալի, բացայայտչի և
պայայտեալի կապակցութիւնը և այլն:
Քերականութեան այս բաժինը արդի

14. ԶԱՐՏԵՐՆԵՐ, ՎԵՐԱԿՐՈՒՅԹ, 1859 թ., էջ 47.

ըմբռնումով շարահիւսութիւնն է, որը, ինչպէս արդէն ասել ենք, Զամշևանի մօտ բարձր գնահատականի է արժանացել: «Յաղագս համաձայնութիւն մասնաց բանի» (խօսքի մասերի համաձայնութիւն մասին) գլուխը նույրուած է կապակցութեանը, որը շարադրուած էն համաձայնութեան և խնդրառութեան հարցերը: Ի դպի, ասենք, որ խնդրառութիւնը եղը հայ շարահիւսութիւն պատմութեան մէջ տառաջին անդամ զործածել է Մ. Զամշևանը և այդ եղը որո՞չ ճշգրտումով մէկրդոմիշտ մտել է մեր շարահիւսութեան համակարգի մէջ և իր գոյութիւնը շարունակում է առաջար: Զամշևանի կարծիքով քերականութեան արուեստի հանդիսութիւնն այս մասով է պայծառանալու և ճոյանալու, որովհետեւ նախորդ երկու բաժիններում սովորած բառերն իրենց թեքումներով ու յատկութիւններով այսուղ է, որ համաձայնութեան ու խնդրառութեան միջոցով պէտք է խօսք կազմեն, այսուղ է, որ բառերն իրար հետ կապակցելով պէտք է խօսք զառնան, ցոյց տան իրենց ողջ պէրճակնութիւնը, արտայալուական բոլոր նրբերանդները: Տեսնելով այս ամէնը՝ ուսանողները պէտք է զուարձանան ու բերկանք ապրեն: Ինչպէս որ հօգի մշակը իր քրտինքով աճեցրած բերքը հաւաքելիս խրախանքի սեղան է նստում և եւ ուրախանում, ճիշտ այդպէս էլ ուսանողները շարահիւսութեան միջոցով պէտք է խօսք կազմեն, որի համեմատ կապակցել է նրանց հոգիները, իր սկսեն պարարտանալ: Շարահիւսութեան նման գնահատականը միանգամայն նոր է և ցոյց տալիս, որ Մ. Զամշևանը լիովին դիտակցել է նրա կերը և, ճիշտ այսօրուայ նման, քերականութեան մէջ ճանաչել է նրա իրաւահատականը միմակը:

«Հանդիսութիւն արուեստի քերականութեան յայտ մասին պայծառանայ ողում է քերականը՝ զի ի ամին բառք ամիսներու կազմութիւնը կապակցութեան պատմութեան մէջ:

բառից ընդ իրենայս յայս սեղան զուարձանան և եւ բերկրին. եւս ևս ախորդանոք վայելեն զպառւզս վաստակոց իւրեանց, զոր վաստակեցին յառաջին և յերկորդ մասին: Եւ յանձանձիւն ճաշակել սկսանին պարարտանալ ողիք նոցա յանուշութեան կանից»¹⁵:

Ինչպէս ասացինք, Մ. Զամշևանի մօտ բուն շարահիւսութիւնը շարադրուած է «Համաձայնութիւն մասնաց բանի» զըլիում: Նա համաձայնութիւնը համարում է խօսքի մասերի կապակցութիւնը միմեանց: Իր նախորդներից Զամշևանը տարրերում է նրանով, որ ընդունում է համաձայնութեան ութ տեսակ (նախորդների մօտ այդ համաձայնութիւնը երեք էր կամ չորս): Բայց հեղինակի՝ «եղանակ լսու ութից մասնաց բանի»¹⁶:

Ինչպէս նկատում ենք, Զամշևանը «շարահիւսութիւն» եղը չի զործածում, այս հարցում հետեւելով Միթթար Սերաստացուն և միւնքներին: Զամշած այս թերութեանը, քերականի երկասիրութիւններում ակնյայտ նորութիւնն այն է, որ կառակ իր նախորդների, «հոյովառութիւն» եղը փոխարէն զործ է ածում «խնդրառութիւն» եղը, որը ևս յետակայ քերականներին ուղղութիւն է առիլս ևս անփոփոխ ճեւով մտնում է մեր շարահիւսութիւններին պատմութեան մէջ ու իր զոյութիւնը շարունակում է մինչեւ մեր օրերը:

Բացի այս, այս բաժնում տեղ են գտնել բացայալութերացայալուալ, յատկացուցիչ-յատկացեալ, աէք բայց, ինդիք ևս այլ հասկացութիւններ, որոնք զուտ շարահիւսական իրողութիւններ են:

Ասածներից պարզ երեւում է, որ Մ. Զամշևանը բաւական բարձր է գնահատել շարահիւսութեան գերը խօսքի կառուցման զործում: Միթթար Սերաստացուց և Պարտասար Դպրից յետոյ, սա մեծ առջարիմութիւնն էր մեր քերականագիւսութեան պատմութեան մէջ:

15. ԱԱԾ ՁԵԱՆ, Քերականութիւն Հայկացեան կեդուի, Տփեամ, 1826 թ., էջ 227:

16. Կոյն տեղում:

Աղքածէն նաև նկել այն, որ Զամբէսանի աշխատութիւնը փայլում է իր մաքուր հայտնաբանութեամբ, փաստերի առաջարկութեամբ և գասական հայերէնի օրէնքների ողուժում հաւատարիմ մնալու յատկանիւն ներսով:

Խօսք եւ նախադասութիւն

Զամէչեանի մօտ չկայ խօսք և նախա-
դասութիւն հասկացութիւնների տարրե-
լակումը: Այս հարցում Զամէչեանը ան-
տեսել է այն գրականը, որ ստեղծել էին
իր նախորդները: Արդէն զիտենք, որ Ս.
Ջուզայեցին, Գալանտարը և Պատմասար
Դպիրը որպէս գրականի տարրերական էին
խօսք և նախագասութիւն հսկացու-
թիւնները: Նախագասութիւն եղը իրանք
արդէն մացցել էին շարաշիւսական հա-
մակարգի մէջ և տուել նրա հութիւնը,
արդի ըմբանամբ այդ երեսովի ճիշտ
մէկնութիւնը: Այսպէս Զամէչեանը նա-
հանջ է կատարում եղած գրականին «
քրան» ու «նախագասութիւն» շարաշիւ-
սական երկու տարրեր իրողութիւնները
նորից տրուայտառում է մի եղող՝
«քրան»ով: «Բանն է կարգաւոր չարամա-
նութիւն բառից՝ յայտնող տրամախոհու-
թեան մասց» - զրում է Զամէչեանը:
Կամ «իսկ յստեի՞ն՝ յայտնող տրամախո-
հութեան մասց - զրում է նա - ցուցանէ,
թէ յայնժամ շարուածք ինչ ի բասից քրան
ասի, յորժամ զգատմանն, կամ զիսս
մասց մերոց յայտնէ, թէ իցէ ի սակաւ
բառից կազմեալ, և թէ ի բազմաց»:
(Մոնկուա, 1859 թ., էջ 87):

գեալքը¹⁷։ Քերականը ճիշտ է նկատում, որ նա-
խագտառաթիւնները կարող են կազմուած

լինել ինչպէս քիչ, այնպէս էլ շատ բառերից :

Իր նախորդների նման Զամշէնան էլ է նկատել զեղչուած ստորովեալով նախագասութիւնների փաստը մեր լեզուում։ Նա բերում է զեղչուած ստորովեալներով նախագասութիւններ եւ ցոյց է տալիս, որ գրանք այդ վիճակով էլ միտք են արտայայտում։ Արական պատճենների եւ ուսումնասիրողների գործը հետացնի, վերականգնում է զեղչուած ստորովեալներ եւ ցոյց տալիս, թէ ինչպիսին պէտք է լինէին այդ նախագասութիւնները։ Օրինակ՝ Լալ է կոյր աչօ՛ք քանի կոյր մոռօնախագասութեան մէջ զեղչուել է բայր, սակայն առանց զրա էլ միտքը հասկացում է։ «Անա այս բան - գրում է նա - յայտ առնէ զայն գատումն, որով խօսիմք ի միտու մեր եւ հաստաեմք, թէ լալ է մարդոյ կոյր լինել աչօք, քանի կոյր լինել մոռօք»¹⁸։

Նախադասութեան անդամներ

Արդի եղբայրով նախապատճեան անգամների հասկցութիւնը չկայ Զամշանի մօտ : Նա քանի ի խօսքի մաս է ընդունում, դրանց համապատասխան քանակութեամբ էլ նախապատճեան անգամներ է ընդունում : «Արդ համաձայնութիւնք մասսանց բանի - զրում է նույն կապակցութիւնք նոցա ընդ միմեանս» առ ի կազմել դրան :

Խօսքի ութ մասիցը իրար հետ կապակցուելով՝ ութ տեսակ՝ համաձայնութիւն են կազմում. այսպէս՝ համաձայնութ են ա) անունը անուան, բ) գերանունը գերանուան եւ անուան, գ) բայը անուան, դ) բանանուան եւ ընդունելութիւնան, է) ընդունելութիւնը ընդունելութիւնան, անուան եւ գերանուան, կ) նախադրութիւնը անուան եւ իրեն անուն առնուող ու հոլովուող բառերի, զ) մակրայք բայի եւ բայի զօռութիւն ունենցող բառերի, է) միջարեկա-

17. *Urolophus*, 1859 p., t. 87:

18. *Sphinga*, 1826 P., 42 153:

19. 1830 *P.*, § 276, 1859 *P.*, *U*_n*u**k**m**m*, § 144,
1859 *P.*, *G**u**e**b*, § 301 *h**e* *w**J**b*:

թիւնը «բան»ի (նախադասութեան - Յ. Մ. , ը) չափկապը «բան»ի եւ նրա խօսքի մասերի հետ:

Հետաքրքիր է սրան հետեւող բացառութիւնը, որովհետեւ այնտեղ արգելն դործածուել են շարահիւսական եղրներ: «Յայսոսիկ ութ համաձայնութիւնս առաջ կնին ութ հարկաւոր գիտելիք ի շարադրութեան - զրում է նա - որք են սոքին. ա. բացայացածիչ եւ բացայայտեալ, թ. յատկացոցիչ եւ յատկացեալ, գ. ածական եւ գոյական (որոշիչ եւ որոշեալ հասկացութեամբ - Յ. Մ.), դ. յարաբերական եւ յարաբերեալ, եւ անուն բայի («ննթակայի հասկացութեամբ - Յ. Մ.), զ. խնդիր, է. արգելիչ խնդրոյ, ը. նախողիր»²⁰:

Չամչեանը այս խօսքի մասերի համաձայնութիւնը շարագրելուց յետոյ անդրագանում է հարցման եւ պատասխանի համաձայնութեանը: (Մ. , 1859, էջ 228) Իսկ սրանից յետոյ անդրագանում է խօսքի (կամ նախադասութեան) զանազան տեսակի շարադրասութեանը: (Մ. , 1859, էջ 229):

Շատ ուսանելի է Չամչեանի գրքի մեթոդական տաքրը: Քերականական վերլուծութիւնների թաժնում հեղինակը մեթոդական բացատրութիւններ է տալիս, որպէս եւ հեշտացնում է նիւթի ընկալումը եւ նպաստում նրա իրացման դործին:

Այս մասին անհրաժեշտ էր խօսել, սակայն նիւթի ծաւալը եւ այլ հանդամանքները թույլ չեն տալիս մեղ այդ հարցին անդրագանութեալու:

Այժմ ծանօթանանք նախադասութեան իրաքանչիւր անդամի բնորոշանք:

Անուն կամ տէր բայի

Չամչեանի մօտ, այսօրուայ նման, ենթակայ եզրը չկայ, բայց կայ ենթակայի հասկացութիւնը: Բայի համաձայնութեան մտիւն խօսելիս՝ նա մի քանի անդամ յիշատակում է ենթակայի հասկացութիւնը, այսպէս՝ «Որպէս հարկ է զրում դորութեանց կողմէ դորոշութեանց կամ կրութեանց ունիլ նախ զգործուց կամ զկրօղն կամ զկրօղ. եւ երկրորդ՝

զեզր զործողութեանց, կամ ենթակայ, կամ զպատճառ եւ կամ զգործի...»: «սոյնսէս եւ բայլից հարկ է ունիլ նախ՝ զանուն բայլ, որ նշանակեացէ զգործողն, այսինքն՝ զտէր զործողութեանց, կամ զկրօղն»²¹: Ենթակայի, կամ ինչպէս ինքը՝ հեղինակն է ասում, «անուն բայլից առէր բայլից մասին յատուկ սահմանում է տուլիս: «Անուն բայլին է այն - զրում է Զամչեանը - որ նշանակէ զտէր զործողութեան. այսինքն զգործողն կամ զկրօղն, եւ կամ զայն որ լինիր»²²:

Այսպէս, անուն ասելով՝ Չամչեանը հասկանում է գոյականը, ածականը եւ թուականը: Բայց ենթակայի գերով կարող են հանդէս գտն ոչ միայն անունները, այլև խօսքի միւս մտսերը, ինչպէս՝ գերանունները, ընդունելութիւնը, «իսկ երեմն եւ աներենոյթ բայլ եւս - զրում է նա - երեմն իրը անուն վարին, նոքա եւս լինին բազում անդամ անուն բայլ...»²³: Քերականն այս բանը աւելի մանրամասնորէն է բացատրում իր գրքի յաջորդ էջերում. օրինակ՝ «Այլ աներեւոյթըն զոր յօդ եւ ունիցին, լինին անուն բայլ միշտ յերրորդ զէմս. զոր օրինակ այ նստելս վեհագոյն բնաւոցգոյն ոչ է իմ, այլ Քիսասոսի: թ.» Տիրելի ամենեցուն՝ ինայիւ տայ քեզ յամենեսեան: զ) Ողորմելին չթողու զարժամին խնդրել: Սոքա բազում անդամ առանց յօդի եւս լինին անուն բայլ. մանաւանդ էական բայլից, զոր օրինակ. մեկնել ի շարեաց՝ է հանձար. ուր աներենոյթ բայս մեկնիւ առանց յօդի յեալ է անսան բայլն է»²⁴:

«Եւ քանզի - զրում է քերականը. յատկապէս անուննք եւ դերանուանք եւ մոնուներութիւնն կարպին նշանակի ըդզործողն կամ զկրօղն, նոքա միայն յատկապէս անուն բայլ...»²⁵:

20. Մասկաւ, 1859 թ., էջ 144, 1830 թ., էջ 277. 1859 թ. Շուշի, էջ 302, Վենետիկ, 1801 թ., էջ 183-184:

21. Շուշի, 1859 թ., էջ 443:

22. Վենետիկ, 1859 թ., էջ 192:

23. Եսյն աեզում, էջ 193:

24. Եսյն աեզում, էջ 196:

25. Եսյն աեզում, էջ 192:

Բացի այս, Զամչեանը զգուշացնում է, որ «անոն բայլ»ի (այսինքն՝ ենթակայի) դերով կարող են հանդիս զալ նաեւ խօսքի մասներ, ինչպէս՝ նախադրութիւնները (իբրևն նախդիր է բանի), մակրայլ (զայս արդեօքն ՅԱՅՅԱ ԱՄՆԵՑ), չափազը (զի եւս-ն ԱՅԼ, և եւ եւս-ն ԱՅԼ), մեջարկութիւնը (ոհեն քափաքանաց որում ոչ հասանեմք՝ է տարացոյց ապաշաւանց), զիմաւրը բայն (գիտեմ-ն ամենեցուն ՅԱՅՅԱ Էլ)»²⁶:

Այս նախադասութիւններում ընդգրծառած բառերը՝ զիմաստաներով զբուածուակիրի կամ էական բայլերի անուն բարյիներն են: Այս կարդի ենթակաները (ըստ քերականի՝ տէք կամ անուն բայլի) համարութիւնը են ոչ էական, երկրորդարար (անյատկապէս, պիտակարար) զգործածուուներ:

Անուն բայլին աւելի որոշակի բնորոշելու համար՝ Զամչեանը բերում է այսպիսի մի նախադասութիւն: «Քերան ամբարբւտաց կլանէ զդատաստան» եւ շարահիւտաց կլանէ զդատաստան» եւ շարահիւտաց կական վերլուծութեամբ բացառուում է սական վերլուծութեամբ բացառուում է անունը, այսինքն պոյականը, ածականը և թուականը, ապա ըստ այդք էլ խօսում է զրանց համաձայնութեան մասին: Ըստ քերականին, եթէ անուն բայլին (ենթական) «բազմակի է և զանազանապէճ», ապա բայլը զբուելու է միայն առաջին զէմքով: Նախորդ քերականերին նման Զամչեանն էլ առաջին զէմքը համարում է «պատաւականապոյն». օրինակ՝ ես և զու և ամենայն բարձութիւնը աշակերտեսցուք աստուածային դրուց» (Վենետիկ, 1859 թ., էջ 197): Երբ անուն բայլին (ենթական) բազմակի է եւ տարրելը գէմքերով, բայլը զբուելու է դարձեալ պատաւականապայն զէմքով, այսինքն՝ առաջին զէմքով: Խոկ երբ ենթակաները մէկը առաջին զէմքի է, միւսը՝ երկրորդը, յաջորդը՝ երրորդը, բայլը զբուելու է առաջին զէմքով, որովհետեւ առաջին զէմքը, ինչպէս ասուեց, պատաւականապայն է, նախընտրելի քան երկրորդը, կամ երկրորդն աւելի պատուականապայն է քան երրորդը եւ այլն: Օրինակ՝ չի կարելի ասել «ես և զու և ամենայն բազմութիւնդ աշակերտեսցիք (կամ՝ աշակերտեսցին):»: Այլ օրինակ.

Այսի նախադասութիւններ, որոնք առանց ենթակայի են, սակայն ենթական մըտքով հասկացւում է եւ կարող է վերականգնուել: Օրինակ՝ «Եթէ կամիս հետեւել Յիսուսի, պահեա զրանս նորա» (Վենետիկ, 1859 թ., էջ 198): Այս նախադասութեան միջից զեղչուել է որև ենթական (արտայարուած զերանուամբ), որը մաքով հասկացւում է եւ հնարաւոր է վերականգնուել: Զամչեանն էլ ճիշտ այդպէս է հասկացել. ահա նրա բացարութիւնը. «...ուր անոն բայլից կամիս եւ պահեա զօրութեամբ զնի, այսինքն է որև» (նոյն տեղում):

Արդ քանի որ «աէր բայլ» ասելով քերականը հասկանում է ենթական եւ զրահասկացւթեան մէջ էլ Հիմնականում ընդունում է անունը, այսինքն զոյականը, ածականը և թուականը, ապա ըստ այդք էլ խօսում է զրանց համաձայնութեան մասին: Ըստ քերականին, եթէ անուն բայլին (ենթական) «բազմակի է և զանազանապէճ», ապա բայլը զբուելու է միայն առաջին զէմքով: Նախորդ քերականերին նման Զամչեանն էլ առաջին զէմքը համարում է «պատաւականապոյն». օրինակ՝ ես և զու և ամենայն բարձութիւնը աշակերտեսցուք աստուածային դրուց» (Վենետիկ, 1859 թ., էջ 197): Երբ անուն բայլին (ենթական) բազմակի է եւ տարրելը գէմքերով, բայլը զբուելու է դարձեալ պատաւականապայն զէմքով, այսինքն՝ առաջին զէմքով: Խոկ երբ ենթակաները մէկը առաջին զէմքի է, միւսը՝ երկրորդը, յաջորդը՝ երրորդը, բայլը զբուելու է առաջին զէմքով, որովհետեւ առաջին զէմքը, ինչպէս ասուեց, պատաւականապայն է, նախընտրելի քան երկրորդը, կամ երկրորդն աւելի պատուականապայն է քան երրորդը եւ այլն: Օրինակ՝ չի կարելի ասել «ես և զու և ամենայն բազմութիւնդ աշակերտեսցիք (կամ՝ աշակերտեսցին):»: Այլ օրինակ.

26. Նոյն տեղում, էջ 193-եւ Շուշի, 1859 թ., էջ 443, 444:

27. Շուշի, 1859 թ., էջ 443:

(ուղիղ խնդիր):
Զամչեանը նոյնպէս նկատել է, որ չափազականը յասուուկ է ենթակայի զիդայոց լեզուին յասուուկ է չափականը կան այսումը, այսինքն՝ չափականը կան այսումը:

պէտք է ասել ու զրել «Խշեա մեղ դու եւ որդի քո եւ որդի քո զրուց քոց» եւ ոչ թէ՝ «Դու եւ որդի քո իշխեսցէ» եւ այլն (Վենետիկ, 1859 թ., էջ 197) :

Եթէ անուն բային ըստ ձեւի «Հեղական» է, իսկ բառ իմաստի ու նշանակութեան «րազմաւորական», ապա բայլը զրուելու է յոդնակի թուով. օրինակ՝ «Հինգն ի նոոցանէ յիմարք էին»: Կամ՝ «Եթէ երկու ապացեն ի մի երկանս, մին առնուցու, և միւսն թողուցու» (Շուշի, 1859 թ., էջ 457): Այս նախականութեան մէջ ապայցեն բայլը զրուած է յոդնակի թուով, որովհետեւ անուն բային եկիու թուուկանն է:

Եթէ անուն բային հաւաքական անուն է, ինչպէս՝ գունդ, ամբոխ, օրք եւ այլն, կամ՝ հանրական անուն է, օրինակ՝ ամենայն, եւ կամ կրկնակ է, այսպէս՝ մի մի այլ ցընկեր, այլ ու ձի, ապա զրանց հետ զործածուող բայլը երբեմն զրուում է յոդնակի՝ հսմածայն զրանց րազմաւորական նշանակութեան. այսպէս՝ «Տիրեցին աշխարհիս Հայոց՝ ապին Սասանաց պարսկի»: Կամ՝ «Ժողովուրդն ուրախացան ի բանս նորա» (Շուշի, 1859 թ., էջ 458) :

Եթէ բայլը գիմաւոր է, ենթական զրբուելու է ուղղական հոլովով. օրինակ՝ «Դադարեցին նեղութիւնքն, եւ հետահանքն»: Դադարեցին եւ եհաս բայլերի ենթակաները նեղութիւնքն եւ հանգիստ զրուած են ուղղական հոլովով, որովհետեւ բայլերը գիմաւոր են:

Իսկ եթէ բայլ անդէմ է, ինչպէս աներեւոյթ բայլերը, գերբայները, զրադէմ բայլերը, անուն բային զրուելու է սեռական հոլովով. օրինակ՝ Այն է ժամանակ, յորուում երանութիւնքն լուսն. ալքատաց մէծանալ եւ սպաւորաց եւ հեզոց զիկրին երկիրն ժառանդել: Աղքատաց, սպաւորաց եւ հեզոց անուն բայիները զրուել են սեռական հոլովով մեծանալ, միթքարել եւ ժառանդել բայլերի անդէմ լինելու պատճառով: Եթէ այս բայլերը որոշեալ գէմքով զրուէին, ապա ենթակաները ուղղական հոլովով պէտք է զրուէին, ինչպէս՝ Աղքատաց մէծանան, սպաւորք

միսիթարին եւ հեղք ժառանդեն զվերին երկիրն:

Դերանունները երբեմն զրուում են նաև արական հոլովով. օրինակ՝ փափաքեաց անձն իմ ի ցանկալ ինձ յիբաւունս քո:

Յարակաստար եւ զերակաստար ժամանակ ունեցող բայլերի ստորագասական անցեալի ենթակաները կարող են զրուել նաև սեռական հոլովով, օրինակ՝ «Եւ իմ եկեալ է ի մաի իմուտ բարձր չարչարտոք կարճել զնեզ ի կենաց ձերոց»:

Սեռական զերանունները, իմ, այսուղ հանդէս է եկել՝ եղեալ է բայլ համար որպէս անուն բայլի (Ենթակայ) կամ՝ Գամել է մեր յաստուծեղին տառիս, զի մի՛ մոռացց զձեղ: Այսուղ էլ գունալ է բայլի ենթակայ է սեռական հոլով զրուած մեր զերանունը (Վենետիկ, 1859, էջ 193-4):

Գոյականները, անունները կարող են հանդէս գալ ածականարար, այսինքն՝ որոշչի գերում. օրինակ՝ «Ո՞ր ապաստ սիրս... ի միշտատիկն զայս ոչ երկրպացէ առաջի նորա»: Այս նախականութեան մէջ ապաստ զոյականն սիրտ զոյականի հետ զործ է ածուել ածականարար, իրբեւ որոշչի: Կամ՝ «Սպառէր եւ մաշը վլսաւար խորհուրդս նորա» (Վենետիկ, 1859 թ., էջ 169): Կարող են այդ կերպ զործածուել նաև ազգերի անունները. օրինակ՝ Յոյն ի հայ բարբառ կորուստ. Զտունն մեծ զըրուալեաց մայր փայտիւք: Այս կերպ. «Ենիսկուպրս անուն ի հելենացի լեզուէ է», ուր եփսկուպոս բառը անուն բառի համար զրուել է իրբեւ ածական (որոշչի) եւ կամ իրը բացայացուիչ:

Քանի որ զոյականները, ըստ Զամշեստի, մեծ մասամբ հանդէս են զալիս որոշչի ենթակայ, իսկ մասամբ նաև որոշչի, խնդիր ու այլ կարգի լրացումներ, ուստի քերականն այդ մասին յաջորդարար խօսում է բացայացուչի ու բացայացեալի, յատկացուչի ու յատկացեալի մեկնութիւնները տալիս: